ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի գիտական
խորհրդի 27.02.2009թ. թիվ 1 նիստում,
ԳԽ նախագահ, տնօրեն

Ս. ԱՌԱՔԵԼՅԱՆ
«____» փետրվար 2009թ.

Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ

«ԵՊՀ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ» ՊՈԱԿ-Ի «ՕՐԻՆԱԿՆԱՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՄԱՆ» ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՍԻՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. 1. *«Օրինականության պահպանման և ուսանողների իրավունքների պաշտպանման»* հանձնաժողովը իր գործունեությաունը իրականացնում է *«ՀՀ կրթության մասին»* օրենքի և *«ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի ներքին կարգապահական կանոնների»* պահանջներին համապատասխան:

Հանձնաժողովը հաշվետու է միայն մասնաճյուղի տնօրենի առաջ:

1. 2. Սույն կանոնակարգը սահմանում է մասնաճյուղում օրինականության պահպանման և ուսանողների իրավունքների պաշտպանման իրավական ողջ գործընթացը, նրա կարգավորման ենթակա խնդիրները, այն անձանց շրջանակը, որոնց իրավունքները ենթակա են պաշտպանության:

1. 3. Հանձնաժողովը կազմավորվում է 6 անդամից, որից 1-ը նախագահ, 1-ը հանձնաժողովի քարտուղար, իսկ 4-ը անդամներ:

Հանձնաժողովի երեք անդամներ առաջադրվում են մասնաճյուղի տնօրենի, իսկ մյուս երեքը՝ գիտական խորհրդի կողմից:

1. 4. Հանձնաժողովի սույն գործառութային պարտականությունները կարող են լրացվել կամ փոփոխվել ԵՊՀ Իջևանի մասանճյուղի տնօրենի համաձայնությամբ:

2. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«Օրինականության պահպանման և ուսանողների իրավունքների պաշտպանման» հանձնաժողովը իրավունք ունի.

2. 1. Բացահայտ և անլուր եղանակներով պարզել մասնաճյուղում տիրող օրինականության վիճակը, հետաքրքրություն ներկայացնող տեղեկությունների մասին անհապաղ տեղյակ պահել մասնաճյուղի տնօրենին և անհարաժեշտության դեպքում նշված հարցը քննարկել հանձնաժողովի նիստում, որի ընթացքում պարզել օրինախախտումների առաջացմանը նպաստող պատճառներն ու պայմանները և ձեռնարկել համապատասխան միջոցառումներ այդպիսիք վերացնելու համար:

2. 2. Օրինականության պահպանման և ուսանողների իրավունքների պաշտպանման աշխատանքներն ավելի արդյունավետ դարձնելու նպատակով մասնաճյուղում ստեղծել դիմում-բողոքների և առաջարկությունների ընդունման արկղ, որի պարունակությունը հանվում է շաբաթը մեկ անգամ հանձնաժողովի երեք անդամների ներկայությամբ: Արկղում եղած դիմում-բողոքներն ու առաջարկությունները ուսումնասիրվում են անմիջապես, ձևակերպվում և ըստ էության նրանց տրվում է ընթացք, կամ էլ առանձին դեպքերում անմիջապես զեկուցվում է մասնաճյուղի տնօրենին:

2. 3. Մասնաճյուղի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների հետ համատեղ իրականացնել օրինականությանն ու ուսանողների պաշտպանմանն ուղղված համալիր միջոցառումներ, այդ թվում առանձին օրինախախտումների վերաբերյալ համատեղ ուսումնասիրություններ և քննարկումներ:

2. 4. Աշխատանքային համագործակցված կապ պահպանել մասնաճյուղի ֆակուլտետների կուրսերի ավագների հետ և նրանց օգնությամբ պարզել հանձնաժողովի գործառութային ենթակա հարցերի վերաբերյալ հանգամանքեր ու փաստեր և ըստ էության դրանց տալ հետագա ընթացք:

2. 5. Հանձնաժողովը իր գործունեությունը իրականացնում է համաձայն եռամսյակային աշխատանքային պլանի, որը հաստատվում է հանձնաժողովի հերթական նիստի ժամանակ: Աշխատանքային պլանի մեջ ներառվում են օրինականության և ուսանողների իրավունքների պաշտպանությանն ուղղված, ինչպես նաև կոռուպցիոն դրսևորումների դեմ իրականացվող համալիր, անհատական և ընդհանուր բնույթի դաստիարակչական և նախզգուշական միջոցառումներ:

2. 6. Յուրաքանչյուր ամիսը մեկ անգամ, իսկ առանձին դեպքերում ավելի հաճախ, հրավիրվում է հանձնաժողովի նիստեր, որին մասանկից են դարձվում նաև այն անձիք ու ուսանողները, ինչպես նաև ֆակուլտետների ղեկաններ, ամբիոնի վարիչներ, դասախոսներ, որոնց իրավունքները խախտվել են, կամ էլ նրանց ներկայությունը պարտադիր է հարցի քննարկման ժամանակ:

2. 7. Հանձնաժողովի կողմից նախապատրաստվող և քննարկվող հարցերի մասին նախապես տեղյակ պահել մասանճյուղի տնօրենին, իսկ նրա բացակայության դեպքում

փոխարինող անձին, առանձին դեպքերում տնօրենի համաձայնությամբ հարցի քննարկումը կազմակերպել տնօրինության նիստերում:

2. 8. Մասնաճյուղի աշխատանքային գործունեության որևէ ոլորտում օրինախախտումներ կամ կոռուպցիոն դրսևորումներ հայտնաբերելու, ինչպես նաև հասատաության շահերին վնաս պատճառելու կամ այդպիսի վնասի իրական վտանգի դեպքում այդ մասին անհապաղ տեղյակ պահել մասնաճյուղի տնօրենին և մատնանշել դրանց կարգավորման օրինական ճանապարհները:

2. 9. Մասնաճյուղում ուսանողների իրավական դաստիարակության մակարդակի բարձրացման նպատակով պարբերաբար հաստատություն հրավիրել մարզի իրավապահ մարմինների ղեկավարների և առանձին աշխատակիցների՝ իրավական թեմաներով դասախոսություններ կարդալու համար:

2. 10. Հանձնաժողովի աշխատանքները լուսաբանելու նպատակով մասանաճյուղի առանձին մասանշենքերում ստեղծել համապատասխան անկյուններ և կազմակերպել պատի թերթեր, որոնց միջոցով ներկայացնել ուսանողների իրավունքների պաշտպանման և օրինականության պահպանման գործում կատարված աշխատանքներն ու բացթողումները: